# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ապրիլի 2026թ. թիվ 253-Ա

## Հ.ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2026 թվականի ապրիլի 17-ի թիվ 247-Ա որոշումը և հաշվի առնելով Հ.Կոստանդյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ո ւ մ  եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցիչ Հայկուշ Վազգենի Կոստանդյանին՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում նոր տնօրենի ընտրությունը:

2. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված տնօրենի պարտականությունների իրականացման համար Հայկուշ Կոստանդյանին տալ լրավճար «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի աշխատավարձի 30%-ի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի ապրիլի 18-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-04-18 18:38:06 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. ապրիլի 18
ք.Վանաձոր